ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1

ք. Մեղրի «18» փետրվարի 2020 թ.

« Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն »ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Նատալի ֆարմ » ՍՊԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Հնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բ անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպք Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ ն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառո ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանա համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունի

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջի պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներու հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրա համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետ համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսվ ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությա սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թ մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատ պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրան պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապվ անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջի պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումնե գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրա տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2165040 /երկու միլիոն հարյուր վաթսունհինգ հազար քառասուն/ ՀՀ դրա ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառո կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրմ ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնոր նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին էլեկտրոնային տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատ
պակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմա
կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքն
դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են
գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանա
Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքո
ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետո
օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացու
նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման
ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաս
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրա
ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հ
պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակ
www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մ
ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լ
վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջ
օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկա
հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջ
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար
իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N
հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետու
իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	" Նատալի ֆարմ" ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի , Գործարարների 42	ՀՀ ք .Երևան,Տիչինայի փ. 3-րդ նրբանցք 2/2
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ	Բանկ " Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 16099-003354200	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 01222567
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru	Էլ.փոստ natalipharm@bk.ru
Հեռ. 0286-60687	Հեռ. 010-744212
Տնօրեն՝ / / Լ. Վարդանյան	Գլխ. տնօրեն՝ / / Ա.Ասատրյա
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելվա

ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ N ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԿՆՔՎԱԾ 18.02.2020թ. <<ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ>> ՍՊԸ

Ապրանքի տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը

Նախատեսվում է գնել 2020 թվականի ընթացքում

Հ/Հ	չ/h	ԳՄԱ դասակարգման կոդը (CPV)	Առևտրային անվանումը	Ծագման երկիրը, Արտադրողի անվանումը	չ/մ	միավոր գինը	քանակը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	տեխնիկական բնութագիրը
1	1	33191520	Արյան փոխներարկման համակարգ 150սմ	Էնջիպլաստ	հատ	42,55	6200	263810	Համակարգ ֆիլտրով հեղուկների ներարկման համար
2	2	33141144	Ասեղ 22G N100	Եվրոմեդ	հատ	4,99	1500	7485	Ասեղ միանվագ օգտագործման ներարկիչի համար՝ 22G(0,7 x 30), չժանգոտվող մետաղից: Պայմանական նշանները- <<պահել չոր տեղում, տուփում 100հատ
3	3	33141144	Ասեղ 23G N100	Եվրոմեդ	հատ	4,99	500	2495	Ասեղ միանվագ օգտագործման ներարկիչի համար՝ 23G(0,5 x 25), չժանգոտվող մետաղից: Պայմանական նշանները- <<պահել չոր տեղում, տուփում 100հատ
4	8	33141100	Բախիլներ	Վոլգա Մեդիքալ	հատ	5,88	1000	5880	Ռեզինի տեսակը կրկնակի,նյութը ցածր ճնշման պոլիէթիլեն,չափսը 14x40սմ,խտությունը 2.0գր,հաստությունը 12 միկրոն
5	12	33141110	Վիրակապ 5մ x10սմ	Նատալի ֆարմ	հատ	52	2000	104000	Վիրակապ /բինտ/՝ 5մx10սմ ոչ ստերիլ: Ֆորմատ- հատ: «պահել չոր տեղում»:
6	13	33141110	Վիրակապ 7մ x14սմ	Նատալի ֆարմ	հատ	85,98	2500	214950	Վիրակապ /բինտ/՝ 7մx14սմ ոչ ստերիլ: Ֆորմատ- հատ: «պահել չոր տեղում»:
7	14	33141211	Բերետ	Հուայան Մեդիքալ	հատ	7,99	700	5593	Թասակ (գլխարկ) բժշկական №1
8	15	33141160	Գել սոնոգրաֆի 250գ ֆլակոն	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	շիշ	259	120	31080	Սոնոգրաֆիայի գել 250մլ,հատ

9	17	33131340	Գինեկոլոգիական հայելի	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	88	500	44000	Կուսկոյի հայելի միանվագ օգտագ. M- Կիրառվում է գինեկոլոգիական հետազոտությունների համար : Բաղկացած է փեղկերից (վերին, ստորին) աշխատանքային պատուհանից (տեսադաշտի պատուհան), ֆիքսատորից (կրեմալ:Ֆորմատը-հատ
10	18	33141185	Գիպս մեծ 20սմx3մ	Եվրոմեդ	հատ	278	250	69500	Գիպսակապ բժշկական 3մx20սմ- Ֆորմատ 3մx20սմ: Ֆորմատ- հատ: «պահել չոր տեղում»:
11	21	33141114	Թանզիֆ 5մ	Նատալի ֆարմ	մետր	77,896	1500	116844	թանզիվ բժշկական 5մ
12	22	33141136	Թիթեռնիկ - ասեղ G23	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	17	1800	30600	կատետեր-թիթեռնիկ G 23
13	29	33141183	Ինտուբացիոն խողովակ մանժետով # 6,5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	229	25	5725	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 6.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ
14	31	33141183	Ինտուբացիոն խողովակ մանժետով # 7,5	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	229	100	22900	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 7.5 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ
15	32	33141183	Ինտուբացիոն խողովակ մանժետով # 8	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	229	25	5725	Էնդոտրախեալ խողովակ մանժետով 8 չափի թափանցիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից,սիլիկոնապատ
16	34	33141136	Կաթետեր երակային Ջ-20 (վարդագույն)	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ	հատ	47,98	500	23990	Պերիֆերիկ երակային կատետեր G-20, ստերիլ,ատրավմատիկ ծայրով, հիգիենիկ ներարկման պորտով տեղադրված է թևիկների վրա
17	35	33141136	Կաթետեր երակային Ջ -22 (երկնագույն)	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ	հատ	47,98	2000	95960	Պերիֆեիկ կատետեր G-22, ատրավմատիկ ծայրով, հիգիենիկ ներարկման պորտով տեղադրված է թևիկների վրա
18	36	33141136	Կաթետեր երակային Ջ-24 (դեղին)	Էնջիպլաստ Փրիվատ Լիմիթեդ	հատ	50	1000	50000	Պերիֆեիկ կատետեր G-24, ատրավմատիկ ծայրով, հիգիենիկ ներարկման պորտով տեղադրված է թևիկների վրա
19	40	33141137	Կաթետր միզային երկճյուղ 16Fr	Եվրոմեդ	հատ	176	50	8800	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 16Fr սիլիկոնապատ: Ֆորմատ- հատ:
20	41	33141137	Կաթետր միզային երկճյուղ 18Fr	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքասլ Էքսիփմենթ	հատ	176	50	8800	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 18Fr սիլիկոնապատ: Ֆորմատ- հատ:
21	42	33141137	Կաթետր միզային երկճյուղ 20Fr	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքասլ Էքսիփմենթ	հատ	176	20	3520	Միզային կաթետր Ֆոլի երկճյուղ 20Fr սիլիկոնապատ: Ֆորմատ- հատ:

22	45	33141156	Ձեռնոցներ ոչ ստերիլ L № 1	Հայ Քեար	հատ	12,78	10000	127800	Ձեռնոցներ զննման լատեքսից՝ ոչ ստերիլ տալկով, L չափի:
23	46	33141156	Ձեռնոցներ ոչ ստերիլ M № 1	Հայ Քեար	հատ	12,78	10000	127800	Ձեռնոցներ զննման լատեքսից՝ ոչ ստերիլ տալկով, M չափի:
24	47	33141156	Ձեռնոցներ ոչ ստերիլ S № 1	Հայ Քեար	հատ	12,78	5000	63900	Ձեռնոցներ զնման լատեքսից ոչ ստերիլ չափը S №100
25	48	33141159	Ձեռնոցներ ստերիլ №6,5 զույգ	Շանդոգ	զույգ	97	400	38800	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 6.5;ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;
26	49	33141159	Ձեռնոցներ ստերիլ №7 զույգ	Շանդոգ	զույգ	97	300	29100	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 7;ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;
27	50	33141159	Ձեռնոցներ ստերիլ №7,5 զույգ	Շանդոգ	զույգ	97	500	48500	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 7.5;ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;
28	51	33141159	Ձեռնոցներ ստերիլ №8 զույգ	Շանդոգ	զույգ	97	300	29100	Ձեռնոց լատեքսից վիրաբուժական չափը 8;ախտահանված,երկարությունը մինչև 285մմ,անատոմիական;ֆորմատը զույգ;
29	52	33121180	Ճնշաչափ մեծ մանժետով պրոֆեսիոնալ	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ	հատ	2790	30	83700	Ճնշաչափ ստետոսկոպով - ՀՃ չափման սարք, ցուցիչով, մանժետով, ստետոսկոպով: Ֆորմատ- հատ:
30	54	33141130	Մեզի անալիզի հավաքման հատուկ պարկ նորածինների համար	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	37	100	3700	Մեզընդունիչ մանկական մանրէազերծ 100մլ
31	55	33141142	Ներարկիչ ինսուլինի ասեղով 1մլ G-29 40միավ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	11,88	500	5940	Ներարկիչ ինսուլինային 1մլ 40 ՄՄ, հանվող ասեղով, ասեղ՝ 26G: Ֆորմատ- հատ:
32	56	33141142	Ներարկիչ ինսուլինի ասեղով 1մլ G-30 100միավ	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ	հատ	11,23	500	5615	Ներարկիչ ինսուլինային 1մլ 100 ՄՄ, հանվող ասեղով, ասեղ՝ 26G: Ֆորմատ- հատ:
33	57	33141142	Ներարկիչ ասեղով 20մլ G-21	Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ	հատ	25,29	2000	50580	Ներարկիչ 20,0- եռակոմպոնենտ, ասեղ 21G: Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկպոլիվինիլքլորիդից: Ֆորմատ- հատ:

34	58	33141142	Ներարկիչ ասեղով 2մլ G-23	Զանգժոու Յուանդոնգ Մեդիքասլ Էքվիփմենթ	հատ	10,55	9000	94950	Ներարկիչ 2,0- եռակոմպոնենտ, ասեղ23G:Պատրաստված թափանցիկ, տոքսիկ պոլիվինիլքլորիդից:Ֆորմատ- հատ:
35	59	33141142	Ներարկիչ ասեղով 5մլ G-22	Զանգժոու Յուանդոնգ Մեդիքասլ Էքվիփմենթ	հատ	10,65	8000	85200	Ներարկիչ 5,0- եռակոմպոնենտ, ասեղ22G:Պատրաստված թափանցիկ, ոչ- տոքսիկ պոլիվինիլքլորիդից: Ֆորմատ- հատ:
36	60	33141142	Ներարկիչ ասեղով 10մլ G-21	Զանգժոու Յուանդոնգ Մեդիքասլ Էքվիփմենթ	հատ	16,67	3500	58345	Ներարկիչ 10,0- եռակոմպոնենտ, ասեղ 21 G: Պատրաստված թափանցիկ, ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից: Ֆորմատ- հատ:
37	62	33141183	Զոնդ նազոգաստրալ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	58	40	2320	Զոնդ ստամոքսային /նազոգաստրալ զոնդ/CH18,Պատրաստված է փափուկ, ատրավմատիկ PVC-ից:
38	63	33141157	Շեղբ վիրահատական չափսը 10 №100 տուփ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	տուփ	1900	3	5700	Շեղբ վիրահատական(նշտարի սայր)՝ N10 : Տուփում 100 հատ , չժանգոտվող մետաղից:
39	64	33161220	Շպատել փայտե №100 տուփ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	տուփ	476,58	40	19063,2	Շպատել փայտե- երկարությունը՝ 150մմ, լայնությունը՝ 18մմ, ոչ ստերիլ, տուփում 100 հատ: Անվտանգությունը: Նշանադրումը- արտադրող երկրի և ֆիրմային նշանի առկայություն:Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»
40	70	33141120	Պորտասեղմիչ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ	հատ	27	100	2700	Պորտի սեղմիչ-մեկանգամյա օգտագործման , պլաստմասե, ստերիլ:
41	71	38411200	Ջերմաչափ "Մաքս" պլաստիկ տուփով	Եվրոմեդ	հատ	271	70	18970	Ջերմաչափ- մարմնի ջերմաստիճանը չափելու համար, սնդիկային, չափման դիապազոնը՝ 32-42°C: Չափսը M-125մմ, Պաշտպանիչ պատյանով:
42	77	39518300	Սավաններ միանգամյա օգտագործման 90սմx180սմ	Մեդիֆորմ	հատ	195	200	39000	Սավան ներծծող "Մեդիփեդ" 90 x 180 №20
43	78	33141143	Սկարիֆիկատոր պլ.1 N 200 տուփ	Զանգժոու Յուանդոնգ Մեդիքասլ Էքվիփմենթ	հատ	3,12	5000	15600	Սկարիֆիկատոր՝ ստերիլ, պլաստմասե՝ մատծակիչ արյան անալիզ վերցնելու համար, միանվագ օգտագործման, պլաստմասե, ստերիլ: Ունի փոքրիկ, շատ նուրբ և բարակ ասեղ (ասեղի չափերը՝ 18G-25G), որը պատված է պլաստմասե գլխիկով
44	96	33751100	Տակդիր 60x90սմ N 10 տուփ	Մեդիֆորմ	տուփ	1450	60	87000	Սավան ներծծող "Մեդիփեդ" 60 x 90 №20
Ընդամենը երկու միլիոն հարյուր վաթսունհինգ հազար քառասուն դրամ								2165040	

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 27-ը:*

Ծանոթություն 1

Նշված քանակը առավելագույնն է:

Ծանոթություն 2 Հանձնելու պահին

պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն,Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները- «պահել չոր տեղում»: **Ապրանքը մատակարարվում է վաճառողի կողմից ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարների 42 հասցեով, գնորդի կողմից պատվերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:**

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42

Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ

Հ/Հ 16099-003354200

ՀՎՀՀ 09705024

Էլ.փոստ agarak-hosp@mail.ru

Հեռ. 0286-60687

Տնօրեն՝ / / Լ. Վարդանյան

ԿՏ

ՎԱՃԱՌՈՂ՝

" Նատալի ֆարմ" ՍՊԸ

ՀՀ ք .Երևան,Տիչինայի փ.3-րդ նրբանցք2/2

Բանկ " Ամերիաբանկ" ՓԲԸ

Հ/Հ 1570005065330100

ՀՎՀՀ 01222567

Էլ.փոստ natalipharm@bk.ru

Հեռ. 010-744212

Գլխ. Տնօրեն՝ / / Ա.Ասատրյան

ԿՏ

Հավելված N 2
« 18 » փետրվարի 2020թ. կնքված
ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Ձեռք բերված ապրանքի	20%	30%	40%	50%	60%	70%	75%	80%	90%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի , Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" Մեղրու մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60687

Տնօրեն՝ / / Լ. Վարդանյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

" Նատալի ֆարմ" ՍՊԸ
ՀՀ ք .Երևան,Տիչինայի փ. 3-րդ նրբանցք 2/2
Բանկ " Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Էլ.փոստ natalipharm@bk.ru
Հեռ. 010-744212

Գլխ. տնօրեն՝ / / Ա.Ասատրյան

Կ.Տ